ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱԺԲԳ

ԵՐԵՎԱՆ-2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԱԽԱԲԱՆ 3
2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 3
2.1. Ինքնաշխատ գործառույթների իրականացում..... 3
2.2. Հարցումների հիման վրա տեղեկանքների և աջակցության տրամադրում 4-8
2.3. Այլ աշխատանքներ 9

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի բյուջետային գրասենյակը (այսուհետ՝ Բյուջետային գրասենյակ) հաշվետու ժամանակահատվածում (03.01.2024-31. 03. 2024թթ) գործել է հետևյալ կազմով՝ Հայկազ Նասիբյան՝ համակարգող փորձագետ, Արմինե Վարշամյան, Արթուր Ծպնեցյան և Կարինե Բադալյան՝ փորձագետներ: Հաշվետու ժամանակահատվածի (01.04.2024-02. 09. 2024թթ) ժամանակահատվածում գործել է հետևյալ կազմով՝ Արմինե Վարշամյան, Արթուր Ծպնեցյան և Կարինե Բադալյան՝ փորձագետներ: Հաշվետու ժամանակահատվածի վերջում գործել է հետևյալ կազմով՝ փորձագետներ Արթուր Ծպնեցյան և Կարինե Բադալյան:

Բյուջետային գրասենյակի կողմից 2024 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը կազմվել է Ազգային ժողովի աշխատակարգի 120-րդ կետի պահանջներից ելնելով:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ինքնաշխատ գործառույթների իրականացում

(Գործառույթներ որոնք իրականացվում են իմպերատիվ՝ իրավական ակտերով սահմանված դեպքերում և ժամկետներում, անկախ հարցման առկայության)

Ղեկավարվելով Ազգային ժողովի աշխատակարգի 115-րդ կետի 9-րդ և 10-րդ ենթակետերով ու 116-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, Բյուջետային գրասենյակը 2024 թվականի ընթացքում սահմանված ժամկետներում պատրաստել և Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին է տրամադրել՝

- Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության ամփոփ նկարագիրը,

- Հայաստանի Հանրապետության 2024 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած տեղեկանքի ամփոփ նկարագիրը,
- Հայաստանի Հանրապետության 2024 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած տեղեկանքի ամփոփ նկարագիրը,
- Հայաստանի Հանրապետության 2024 թվականի ինն ամիսների պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած տեղեկանքի ամփոփ նկարագիրը,
- Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի նախագծի ամփոփ նկարագիրը:

Հարցումների հիման վրա տեղեկանքների տրամադրում.

Բյուջետային գրասենյակը 2024 թվականի մշտական հանձնաժողովներից և պատգամավորներից ստացել է 24 հարցում: Ստացված հարցումների հիման վրա և աջակցության տրամադրման նպատակով պատրաստվել և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի տեղակալներին, բոլոր մշտական հանձնաժողովներին, ինչպես նաև խմբակցություններին և պատգամավորներին է տրամադրվել թվով 627 տեղեկանքներ:

Բյուջետային գրասենյակը՝ ղեկավարվելով Ազգային ժողովի աշխատակարգի՝

1. 115-րդ կետի 5-րդ ենթակետով և 117-րդ կետի 3-րդ ենթակետով, պատրաստել է ոլորտային տեղեկանքներ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեներով նախատեսված ***ծախսերի***, ինչպես նաև ***կապիտալ ծախսերի*** կատարման ընթացքի վերաբերյալ: Պատրաստված թվով 192 տեղեկանքները տրամադրվել են Ազգային ժողովի համապատասխան մշտական հանձնաժողովներին՝ ըստ իրենց գործունեության ոլորտների, ինչպես նաև Ազգային ժողովի նախագահի տեղակալներին, բոլոր խմբակցություններին և պատգամավորներին:

Մասնավորապես.

- առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովին՝ առողջապահության ոլորտի ծախսեր,
- աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովին՝ սոցիալական ապահովության ոլորտի ծախսեր,
- արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովին՝ արտաքին հարաբերությունների ոլորտի ծախսեր,
- գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովին՝ կրթության, հանգստի, մշակույթի և կրոնի, «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» բաժնի «Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք» և «Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ» խմբերի համար նախատեսված ծախսեր,
- տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովին՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, մարզպետարանների, կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտների, «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ», գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության և որսորդության, ջրամատակարարման և շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտների ծախսեր,
- պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովին՝ պաշտպանության, հասարակական կարգի և անվտանգության ու փրկարար ծառայության ոլորտների ծախսեր,
- պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովին՝ դատական գործունեության և իրավական պաշտպանության, դատախազության, կալանավայրերի ու նախաքննության բնագավառներում ծախսեր,
- մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովին՝ իրավական պաշտպանության և մարդու իրավունքների պաշտպանության բնագավառներում ծախսեր,

- ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին՝ պետական բյուջեի ծախսեր, ներառյալ պետական պարտքի գծով գործառնություններին ուղղված ծախսեր,
- տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովին՝ «Տնտեսական հարաբերություններ» և «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների (այլ դասերին չպատկանող)» ոլորտների ծախսեր,
- պետական բյուջեից վճարված հիփոթեքի, անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին տրամադրված հետվճարի, համայնքներին տրամադրված սուբվենցիաների և դոտացիաների ծախսեր,
- պետական բյուջեի ծախսերն ամբողջությամբ, ըստ հիմնական ծախսային ուղղությունների:

Տեղեկատվության աղբյուրներ են հանդիսացել «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2023թ դեկտեմբերի 28-ի թիվ 2323-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության «LSRep» ծրագրային համակարգը:

2. 115-րդ կետի 5-րդ ենթակետով և 117-րդ կետի 3-րդ ենթակետով պատրաստել է թվով **31** համեմատական, այդ թվում՝ վերլուծական տեղեկանքներ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված *եկամուտների*, այդ թվում՝ հարկային եկամուտների և պետական տուրքերի (ըստ առանձին հարկատեսակների), այլ եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների հավաքագրման ընթացքի վերաբերյալ: Տեղեկանքները տրամադրվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի տեղակալներին, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին և պատգամավորներին:

Տեղեկատվության աղբյուրներ են հանդիսացել «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2023թ.

դեկտեմբերի 28-ի թիվ 2323-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության «LSFinance» և «LSRep» ծրագրային համակարգերը:

3. 115-րդ կետի 7-րդ ենթակետով և 117-րդ կետի 4-րդ ենթակետով, պատրաստել է համեմատական, այդ թվում՝ վերլուծական տեղեկանքներ Հայաստանի Հանրապետության 2022-2024թթ. ***սոցիալ-տնտեսական*** իրավիճակը բնութագրող հիմնական ցուցանիշների վերաբերյալ: Պատրաստված թվով **24** տեղեկանքները տրամադրվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի տեղակալներին, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին և պատգամավորներին:

Տեղեկատվության աղբյուրներ են հանդիսացել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները՝ 2022-2024թթ. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ:

4. 115-րդ կետի 7-րդ ենթակետով և 117-րդ կետի 4-րդ ենթակետով, պատրաստել է թվով **132** համեմատական տեղեկանքներ, այդ թվում՝ վերլուծական տեղեկանքներ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի ***պետական պարտքի*** վերաբերյալ, որոնք տրամադրվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի տեղակալներին, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին և պատգամավորներին:

Տեղեկատվության աղբյուրներ են հանդիսացել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ինտերնետային կայքում հրապարակված Հայաստանի Հանրապետության պետական պարտքի ամսական տեղեկագրերը:

5. 115-րդ կետի 7-րդ ենթակետով և 117-րդ կետի 4-րդ ենթակետով պատրաստել է թվով **24** համեմատական 2022-2024թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված ***փոխանցումների*** վերաբերյալ, որոնք տրամադրվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի տեղակալներին, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին և պատգամավորներին:

Տեղեկատվության աղբյուրներ են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի արտաքին հատվածի վիճակագրության հրապարակումները՝ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից

ստացված և ՀՀ–ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ:

6. 115-րդ կետի 4-րդ ենթակետով և 117-րդ կետի 3-րդ ենթակետով, օգտագործելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության «ԳԳՕ» համակարգի (LSFinance) հնարավորությունները պատրաստվել են թվով **72** համեմատական տեղեկանքներ (օպերատիվ տեղեկատվություն) Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված ***հարկային եկամուտների և պետական տուրքերի*** վերաբերյալ (հաշվետվության ձև 8210), որոնք տրամադրվել են Ազգային ժողովի նախագահի տեղակալներին, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին և պատգամավորներին:

7. 115-րդ և 117-րդ կետերի 1-ին ենթակետերով, պատրաստել է համեմատական տեղեկանքներ (7 տեսակի տեղեկանքներ) Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվության ***հիմնական*** ցուցանիշների վերաբերյալ՝ ներառյալ 2019-2023թթ. ,

8. Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվության համատեքստում պատրաստվել են 33 տեղեկանքներ Հայաստանի Հանրապետության 2019-2023թթ. պետական բյուջեներով բյուջետային գլխավոր կարգադրիչների համար սահմանված ***ֆինանսական, ոչ ֆինանսական*** ցուցանիշների վերաբերյալ, որոնք տրամադրվել են Ազգային ժողովի պատգամավորներին և ոլորտային մշտական հանձնաժողովներին՝ ըստ գործունեության ոլորտների:

9. Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվության համատեքստում որոշ բյուջետային գլխավոր կարգադրիչների բյուջետային ծրագրերի մասով ներկայացվել են դիտարկումներ:

10. Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվության համատեքստում Բյուջետային գրասենյակը մասնակցել է Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում և դրանց համատեղ նիստերում «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվության նախնական քննարկումներին:

11. Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի նախագծի վերաբերյալ պատրաստվել են թվով 29 տեղեկանքներ, որոնք վերաբերում են բյուջետային գլխավոր կարգադրիչների բյուջետային ծրագրերին, դրանց համար սահմանված ֆինանսական, ոչ ֆինանսական, այդ թվում՝ վերջնական արդյունքի, ցուցանիշներին (ներառվել են 2022-2024թթ. ցուցանիշները): Դրանք տրամադրվել են Ազգային ժողովի ոլորտային մշտական հանձնաժողովներին, ըստ գործունեության ոլորտների և Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին,

12. Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի նախագծի քննարկման համատեքստում Ազգային ժողովի շահառու պատգամավորներին ու մշտական հանձնաժողովներն ներկայացվել են 6 հարցադրումներ, դիտարկումներ և առաջարկություններ բյուջետային ծրագրերի վերաբերյալ,

13. Բյուջետային գրասենյակը Ազգային ժողովի աշխատակարգի 115-րդ կետի 11-րդ ենթակետով իրավասու մշտական հանձնաժողովին է տրամադրել մեկ տեղեկանք Հաշվեքննիչ Պալատի կողմից Ազգային ժողով ներկայացված ընթացիկ եզրակացությունների վերաբերյալ:

Այլ աշխատանքներ

Բյուջետային գրասենյակը մասնակցում է ԱՄՆ ՄԶԳ կողմից իրականացվող Հանրային ֆինանսների կառավարման ծրագրին՝ ԱԺ Բյուջետային գրասենյակի ենթաբաղադրիչի մասով: Եռամյա ծրագիրը մեկնարկել է 2022թ. հոկտեմբերից: Ծրագրի կողմից Հաշվետու ժամանակաշրջանում տեղի են ունեցել հանդիպումներ ծրագրի պատասխանատուների հետ՝ ելակետային վիճակի և կարիքների գնահատման նպատակով, որի արդյունքում իրականացվել և իրականացման փուլում են մի շարք ծրագրեր :

Ծրագրի շրջանակներում Բյուջետային գրասենյակի, Ֆինանսավարկային և բյուջետային ու Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների փորձագետների, ինչպես նաև Ֆինանսական կառավարման և հաշվառման ու Փորձագիտական և վերլուծական վարչությունների մասնագետների համար կազմակերպվել և դեռևս ընթացքի մեջ են «Տվյալների վիզուալացում Power BI ծրագրակազմով» վերապատրաստման դասընթացները,

որի նպատակն է Բյուջետային գրասենյակի աշխատանքները իրականացնել՝ օգտվելով այդ գործիքից:

Բյուջետային գրասենյակի փորձագետներ Արմինե Վարշամյանը և Կարինե Բաղալյանը մասնակցել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ԱՄՆ ՄԶԳ Հանրային ֆինանսների կառավարման (ՀՖԿ) Ծրագրի աջակցությամբ 2025թ. բյուջետային գործընթացի շրջանակում կազմակերպված հերթական խորհրդատվական հանդիպմանը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Բյուջետային գրասենյակի փորձագետ Արթուր Ծպնեցյանը մասնակցել է 2025 թվականի բյուջետային գործընթացում կլիմայի փոփոխությանն առնչվող բյուջետային ծրագրերի և ծախսերի դասակարգման և նշագրմանը ծանոթանալու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կազմակերպած դասընթացին:

Բյուջետային գրասենյակի փորձագետները 2024 թվականի հուլիսի 15-ին հանդիպել են Տաջիկստանի Հանրապետության կառավարության պատվիրակության հետ՝ գիտելիքի, փորձի փոխանակման նպատակով Հայաստանի Հանրապետություն այցի և ԵՄ տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակում:

Բյուջետային գրասենյակի փորձագետները 2024 թ. սեպտեմբերի 25-26-ը Ծաղկաձորում մասնակցել են «Խորհրդարանական վերահսկողություն և հաշվետվողականություն Հաշվեքննիչ պալատի եզրակացությունների միջոցով» Աշխատաժողովին:

Բյուջետային գրասենյակի փորձագետ Արթուր Ծպնեցյանը «Բյուջետային ծրագրերի գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի և «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին որոշման նախագծի վերաբերյալ ներկայացրել է առաջարկություններ:

Բյուջետային գրասենյակի փորձագետ Կարինե Բաղալյանը պատգամավորներին մասնագիտական աջակցություն ցուցաբերելու նպատակով մասնակցություն է ունեցել

«Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» ՀՀ օրենքի նախագծի նախապատրաստական աշխատանքներին:

Նիդեռլանդների ֆինանսների նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարության հետ տեխնիկական համագործակցության շրջանակներում սույն թվականի հոկտեմբերի 2-ին տեղի է ունեցել ծրագրային բյուջետավորման և ծախսերի վերանայման թեմաներով հանդիպում քննարկումներ ԱԺ ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի, պատգամավորների, Բյուջետային գրասենյակի փորձագետների և Տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպության **(ՏՀԶԿ)** ներկայացուցիչների հետ:

Բյուջետային գրասենյակի փորձագետները 2024թ. հոկտեմբերի 21-ին մասնակցել են «Հանրային կառավարումը բարելավելու գործում Հաշվեքննիչ պալատի դերը» թեմայով համաժողովին:

2024 թվականի նոյեմբերի 20-ին Բյուջետային գրասենյակի փորձագետ՝ Կարինե Բաղալյանը մասնակցել է Հայաստանում իրականացվող հանրային կառավարման բարեփոխումների շրջանակներում մեկնարկած ՏՀԶԿ/ՍԻԳՄԱ-ի Հայաստանում պետական կառավարման սկզբունքների ուղղությամբ առաջընթացի գնահատման գործընթացի շրջանակներում կազմակերպված մեկնարկային միջոցառմանը, որի հիմնական նպատակն էր տեղեկացնել գնահատման ընդհանուր ռազմավարական համատեքստի, ինչպես նաև ներկայացնել գնահատման հիմնական ուղղությունները, շրջանակը, նշաձողերը և ժամանակացույցը:

Ազգային ժողովի կարողությունների զարգացում

Բյուջետային գրասենյակն Ազգային ժողովի աշխատակարգի 117-րդ կետի համաձայն, ՄԱԶԾ «Նոր Հայաստան, ժամանակակից խորհրդարան» 2-րդ ծրագիր, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության «Հանրային ֆինանսների կառավարման ծրագիր» աջակցությամբ ու համագործակցությամբ 2024 թվականի հոկտեմբերի 17-19-ը Դիլիջանում կազմակերպվել է երկօրյա աշխատաժողով, որի օրակարգում էին պետական բյուջեի նախագծի քննարկման գործընթացում քաղհասարակության

ներգրավման եւ սոցիալական պաշտպանության ոլորտին վերաբերող հարցեր: Աշխատաժողովի շրջանակներում Ազգային ժողովի Բյուջետային գրասենյակի փորձագետ Արթուր Ծպնեցյանը ներկայացրել է «ՀՀ Ազգային ժողովի դերը բյուջետային գործընթացում» թեման: Վերոնշյալ Աշխատաժողովին մասնակացել են շուրջ 30 ՔՀԿ-ների ներկայացուցիչներ, ՀՀ Ազգային ժողովի երկու մշտական հանձնաժողովների անդամներ, այդ հանձնաժողովների փորձագետներ և բյուջետային գրասենյակի փորձագետները:

ՀՀ Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ և ԱՄՆ ՄԶԳ Հանրային ֆինանսների կառավարման ծրագրի աջակցությամբ 2024 թ. դեկտեմբերի 20-ին «Հոլիդեյ Ինն Երևան» հյուրանոց կազմակեպված աշխատաժողովին բյուջետային գրասենյակի փորձագետ՝ Արթուր Ծպնեցյանը ներկայացրել է «ՀՀ Ազգային ժողովի դերը բյուջետային գործընթացում և հանրության ներգրավման հնարավորությունները» թեման: